Նախագիծ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

_____2024թ. №_____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի Հ.856-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի «Վթարային շենքերի բնակիչների վերաբնակեցման աշխատանքները կազմակերպելու մասին» հ.856-Ա որոշման 1-ին և 3-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1) «1. Քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային Արցախի 4-րդ նրբանցքի հ.10 (հանրակացարանային շենք), Արցախի 4-րդ նրբանցքի հ.10 (նախկին թիվ 5 ուսումնարան) և Արցախի 4-րդ նրբանցքի հ.10/1 հանրակացարանային շենքերի բնակիչներին վերաբնակեցնել առկա բնակարանային ֆոնդից բնակարաններ, ինչպես նաև բնակարանների ձեռք բերման վկայագրեր տրամադրելու միջոցով:».

2) «3. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ համապատասխան որոշումների հիման վրա քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային Արցախի 4-րդ նրբանցքի հ.10 (հանրակացարանային շենք), Արցախի 4-րդ նրբանցքի հ.10 (նախկին թիվ 5 ուսումնարան) և Արցախի 4-րդ նրբանցքի հ.10/1 հանրակացարանային շենքերի բնակիչների հետ կնքել բնակարանների նվիրատվության, փոխանակության և/կամ/ բնակարան ձեռք բերելու համար աջակցություն ստանալու մասին պայմանագրեր, ինչպես նաև որպես նվիրատվություն ընդունել բնակարաններ (գույքեր):».

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի Հ.856-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքում քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային շենքերը գտնվում են փլուզման սպառնալիքի տակ, սակայն Երևան համայնքի տրամադրության տակ առկա բնակարանային ֆոնդը հնարավորություն չի ընձեռել ապահովել նշված շենքերի բնակիչների ամբողջական վերաբնակեցումը, ինչի պարագայում անկանխատեսելի հետևանքներից խուսափելու նպատակով, Երևան քաղաքի ավագանու 12.09.2023թ հ.856-Ա որոշմամբ առաջարկվել էր վերաբնակեցումը կազմակերպել բնակարանների ձեռք բերման վկայագրեր տրամադրելու միջոցով:

Երևան քաղաքի ավագանու 12.09.2023թ հ.856-Ա որոշմամբ հաստատվել է Արցախի 4-րդ նրբանցքի հ.10 և հ.10/1 բնակիչների վերաբնակեցման կարգը, որով սահմանվել է մինչև 10.0քմ, 20.0քմ, 30.0քմ մակերեսով տարածք զբաղեցնող ընտանիքներին տրամադրել համապատասխանաբար 25քմ, 35.0քմ, 45.0քմ մակերեսով բնակարանների համար նախատեսված գնման վկայագրեր՝ 1.0քմ մակերեսի համար սահմանելով 402.000 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախի 4-րդ նրբանցքի հ.10 հասցեում գտնվող սպորտային մասնաշենքը հանդիսանում է նախկին թիվ 5 ուսումնարանի մասնաշենք, առաջարկվում է հստակեցնել քննարկվող շենքի անվանումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ